| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|
| 26 | Հունիս | 2019 թ. | | Ա | 8868140041 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | | Ճշգրտվող հաշվի | |
| 26 | Հունիս | 2019 թ. | | Սերիա | Համար |
| | | | | | |
| | | | | Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |
| | | | | | |
| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | | | |
| | | | | | |

| [7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ) |
|---|
| |
| [7.1] ՀԴՄ կտրոնի համար |
| |

| Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 | 1 | 5 | 0 | 3 | 4 | 4 | 8 | | |
| [9] Անվանումը | «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ | | | | | | | | | |
| [10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 | 1 | 5 | 0 | 3 | 4 | 4 | 8 | / | 1 |
| [11] Բանկային տվյալները | Հայբիզնեսբանկ ՓԲԸ | N 11500166513800 | | | | | | | | |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2 | | | | | | | | | |
| [13] Լրացուցիչ տվյալներ | | | | | | | | | | |

| Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 | 2 | 6 | 3 | 1 | 2 | 6 | 3 | | |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | | | | | | | | | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ | | | | | | | | | |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | N 900011000834 | | | | | | | | |
| [18] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | | | | | | | | | |
| [19] Լրացուցիչ տվյալներ | | | | | | | | | | |

| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը) | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումարը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | 57110918 դատահոգեբանական փորձաքննություն | հատ | 1 | 32833.33 | | 32833.33 | 20 | 6566.67 | 39400 |
| Ընդամենը | | | | | | 32833.33 | X | 6566.67 | 39400 |

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
անունը, ազգանունը

26/06/2019 14:45:44

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

# ՈՐՈՇՈՒՄ
# ՀԵՏՄԱՀՈՒ ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

« 13» սեպտեմբերի 2018թ. — ք. Վաղարշապատ

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, Ա.Վ.Կիրակոսյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 57110918 քրեական գործի նյութերը.

## ՊԱՐԶԵՑԻ

2018թ. օգոստոսի 12-ին՝ ժամը 13:25-ի "Արմավիր" ՔԿՀ-ից ոստիկանության Վաղարշապատի բաժին ահազանգ է ստացվել այն մասին, որ "Արմավիր ՔԿՀ-ի 5-րդ մանաշենքի թիվ 504 խցում, երկհարկանի մահճակալի գլխամասից սավանից պատրաստված երիզով կախվելու միջոցով ինքնասպան է եղել նույն ՔԿՀ-ի դատապարտյալ Համլետ Սենիկի Գրիգորյանը:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում որոշում է կայացվել Համլետ Սենիկի Գրիգորյանին տուժող ճանաչելու մասին:

Որպես վկա հարցաքննվել է Հ. Գրիգորյանի եղբայրը՝ Սուրիկ Սենիկի Գրիգորյանը, ով նշել է, որ Համլետը հոգեկան խնդիրներ չի ունեցել, պարզապես նա նեղվել է իր կարգավիճակից, դրա մասին կիսվել է իր հետ, երբ այցելել է նրան, իսկ նրա կողմից ինքնասպանություն կատարելու հանգամանքը իր համար անհասկանալի և անսպասելի է եղել:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով որոշակի հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են դատական հոգեբանության և հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-244, 246-րդ և 248-րդ հոդվածներով.

## ՈՐՈՇԵՑԻ

1/ Թիվ 57110918 քրեական գործով նշանակել հետմահու դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի և ՀՀ ԱՆ միջգերատեսչական ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետներին, առաջնային փորձաքննության իրավունքը վերապահել հոգեբանական փորձագետներին :

2/ Փորձագետների պարզաբանմանը առաջադրել հետևյալ հարցերը.

ա. Ինչ հոգեվիճակում է գտնվել հանգուցյալ Համլետ Գրիգորյանը ինքնասպանությանը նախորդող ժամանակահատվածում:

բ. Ինչպիսի անձնային առանձնահատկություններ, հուզական և մոտիվացիոն ոլորտի առանձնահատկություններ է ունեցել Հ. Գրիգորյանը:

գ. Հ, Գրիգորյանը որևէ հոգեկան հիվանդությամբ կամ հոգեկան գործունեության խանգարմամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի և երբ:

դ. Նման արարք կատարելը կարող էր պայմանավորված լինել նրա հոգեկան վիճակով:

ե. Եթե Հ. Գրիգորյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա ինքնասպանություն կատարելու պահին այդ հիվանդությունը զրկել է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

## ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՄԱՍ

ա. 2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/. Հ. Գրիգորյանը տառապել է արդյոք որևէ հոգեկան հիվանդությամբ, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարմամբ, նրա մոտ առկա է եղել արդյոք որևէ հիվանդագին վիճակ կամ տկարամտություն, եթե այո, ապա կոնկրետ ինչ հիվանդություն և արդյոք դրանք ազդել են Հ. Գրիգորյանի կողմից ինքնասպանություն կատարելու վրա:

բ/ Հ. Գրիգորյանին զրկելեն արդյոք այդ հիվանդությունները նշված արարքը կատարելու պահին իր գործողությունների բնույթն ու նշանակությունը, դրանց վնասակարությունը գիտակցելու և դրանք ղեկավարելու ունակությունից:

գ/ Հ. Գրիգորյանը կարող է գիտակցել իր հետ կատարվածի բնույթն ու նշանակությունը:

ե. Փորձագետներին խնդրել՝ պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև առաջադրված չեն սույն որոշման մեջ, սակայն կառաջանան փորձաքննության կատարման ընթացքում, կմտնեն հոգեբան-հոգեբույժ փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

3/ Փորձաքննություն կատարելու համար փորձագետին տրամադրել սույն որոշումը « 2 », թերթից, իսկ քրեական գործի նյութերը անհրաժեշտության դեպքում կներկայացվեն լրացուցիչ:

4/ Փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց հրաժարվելու, առանց քննիչի թույլտվության քննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Փորձագետներին նախազգուշացնել նաև փորձա-քննություն կատարելու համար նրանց տրամադրված նյութերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հնարավոր պատասխանատվության մասին:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ Ա. Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ